«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԷԴԻԿ ՍՏՅՈՊԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐԱԳԱԾՈՏՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՄԻՋՆԱՏՈՒՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

1.1 Իրավական կրթության և դաստիարակության հասկացությունը.....7

1.2 Իրավական դաստիարակության դերը իրավագիտակցության ձևավորման գործում.....14

1.3 Իրավաչափ վարքագիծը որպես նպատակ.....17

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1 Իրավական դաստիարակության մանկավարժական պայմանները և զարգացման միտումները ՀՀ-ում.....29

2.2 Իրավական դաստիարակության համակարգը.....42

Եզրակացություն.....48

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....50

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավական կրթությունն իր բոլոր բաղադրատարրերով արդի ժամանակաշրջանում՝ շարունակում է կրել խորը փոփոխություններ՝ պայմանավորված 20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին աշխարհում և մեր հանրապետությունում տեղի ունեցած արմատական փոփոխություններով: Հասարակական վերակառուցումը պայմանավորեց իրավական կրթության բարեփոխման անհրաժեշտությունը: Սակայն, մյուս կողմից՝ իրավական կրթության բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հասարակության մեջ իրավագիտակից քաղաքացու սոցիալական դերի փոփոխությամբ: Արդյունքում բարեփոխումներն իրենց հերթին ընկան կախվածության մեջ իրավական կրթություն ստացած կադրերի որակից: Համոզված կերպով կարող ենք ասել, որ բոլոր տեսակի բարեփոխումների հաջողությունը (այն նպաստող պայմանների և պատճառների հետ միասին) մեծամասամբ կախված է արդի պահանջներին համապատասխանող իրավական կրթությունից, որը հասարակական պետական գործունեության բոլոր ոլորտներին ,մատակարարումե է իրավագիտակից քաղաքացիներով: Անհատի որակից է կախված բոլոր բարեփոխումների ճակատագիրը:

Հետևաբար, արդի հասարակական իրողությունները նոր հրամայական պահանջներ են ներկայացնում իրավական կրթությանը, ուստիև՝ հանրապետության իրավական կրթության համակարգին, այդ թվում նաև հանրակրթական: Եվ որպեսզի իրավական կրթությունը լուծի իր առջև դրված խնդիրները, անհրաժեշտ է հետագայում ևս կատարելագործել ու

ձևափոխել այն: Այս կապակցությամբ առաջանում է հարց այն մասին, թե որ ուղղությամբ պետք է տանել բարեփոխումները:

Ակնհայտ է, որ ցանկացած բարեփոխման համար մեթոդաբանական նշանակության աղբյուրներից մեկն էլ արտասահմանյան փորձի հետազոտությունն ու վերլուծությունն է, ինչը հնարավորություն է տալիս փոխառել լավագույնը, դրականը: Երբ մենք դիմում ենք համաշխարհային փորձին, ապա նկատում ենք, որ իրավական կրթությունը գրեթե բոլոր երկրների կրթական համակարգերում գրավում է առաջնային տեղերից մեկը: Սակայն արդի աշխարհում ընդհանրապես կրթության, այդ թվում իրավական, զարգացման հիմնական միտումներից, գծերից մեկը բազմազանությունն է: Աշխարհում իրավական կրթության մեջ ճանաչված է բազմազանությունը (այլ ոչ թե միօրինակությունը)՝ զուգակցված որոշակի ինտեգրացիոն կամ մերձեցման միտումներով: Այդպիսով, աշխարհում չկա իրավական կրթության միանշանակ ընդունվող կամ հանրաճանաչ մոդել, որին կարելի կլիներ տուրք տալ, կամ որը կդառնար մեզ համար ընօրինակման նմուշ: Նշանակում է՝ մեր իրավական կրթության համակարգը բարեփոխելիս նախ պետք է վեր հանենք աշխարհի իրավակրթական դպրոցների տիպերը, մեր տեղը դրանցում, ամեն մի տիպին բնորոշ առավելությունները և թերությունները և դրանից հետո միայն նոր կառուցենք մեր հետագա գործողությունները:

Թեմայի արդիականությունը: Իրավական կրթության և դաստիարակության ուսումնասիրությունը ներկայումս ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Խորհրդային Միության փլուզումը արմատական փոփոխությունների ենթարկեց նախկին խորհրդային հանրապետությունների պետական և քաղաքական

համակարգը: Այդ փոփոխությունները շոշափելի ազդեցություն ունեցան նաև իրավական հարաբերությունների վրա: Հետխորհրդային երկրներում ձևավորվեց իրավական նոր իրադրություն, որը բնութագրվում է իրավահարաբերությունների կանոնավորությամբ, քաղաքացու դերի շեշտակի բարձրացմամբ: Աճեց իրավական գործոնի դերը պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Հետևաբար պետություն քաղաքացի արդյունավետ փոխգործակցություն կառուցելու հանգամանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Պետական իշխանության և իրավական համակարգերի փոխգործակցության պատմական փորձի վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ իրավական միավորների նկատմամբ պետության վարած քաղաքականությունը:

Քննարկելով իրավական կրթության և դաստիարակության դերը՝ մենք նախ և առաջ դիտարկել ենք այն պետության հետ փոխհարաբերությունների տեսանկյունից՝ ընդգծելով նրա երկակի բնույթը. որպես իրավական-բարոյական և որպես իրավաբանական ինստիտուտ, որն արդիական է նաև ներկա ժամանակներում:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտությունում նպատակ ենք հետապնդել հետազոտել ներկա ժամանակահատվածում իրավական կրթության և դաստիարակության նկատմամբ կառավարության իրականացրած քաղաքականությունը, լուսաբանել այն իրողությունները, որոնք կարող են ազդել իրավական քաղաքականության փոփոխման վրա:

Ելնելով նպատակից՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել իրավական կրթության և դաստիարակության իրավական կարգավիճակը:

- Լուսաբանել արմատական փոփոխությունների ազդեցությունն ու հետևանքները իրավական կրթության և դաստիարակության նկատմամբ իրականացվող քաղաքականության վրա:
- Լուսաբանել իրավական կրթության և դաստիարակության դերը ձևավորված իրավական նոր պայմաններում:

ԳԼՈՒԽ 1

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Իրավական կրթության և դաստիարակության հասկացությունը

Արդի աշխարհի կրթական համակարգերը, ներառյալ իրավականը, ըստ իրենց մանկավարժական համակարգերի կարելի է բաժանել երեք հիմնական տեսակների՝

ա) կյանքի բարձրագույն դպրոց,

բ) աշխատանքի բարձրագույն դպրոց,

գ) իմացության բարձրագույն դպրոց:

Կյանքի բարձրագույն դպրոցի[1] էությունը կարելի է արտահայտել հետևյալ թևավոր խոսքերով. փորձի ունցիան ավելին է, քան տեսության տոննան: Այսպիսի դպրոցի խնդիրն անհատականության ազատ զարգացումն է, անհատի, որին հատուկ է պատասխանատու գիտակցությունը, և որը դժվարություններով լի կյանքում ընդունակ է ինքնարտահայտման և ինքնահաստատման: Այդ նպատակին համապատասխան իրավական կրթության ուսումնական մեթոդիկան

Տարածված է ԱՄՆ-ում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում:

կառուցված է համագործակցության մանկավարժության հայեցակարգի վրա: Կրթության մեջ այստեղ շեշտադրվում է ինքնուրույն աշխատանքը, խորհրդատվությունը, անհատական աշխատանքը, ռեֆերատները, գիտաուսումնական հետազոտությունները և այլն: Մեր տեսանկյունից՝ ,կյանքի դպրոցումե պարապմունքները նման են ապակազմակերպվածության: Այս ծայրահեղությունն ունի հատուկ մանկավարժական նպատակ. սովորեցնել ինքնուրույնություն և ընտրության պատասխանատվություն:

Մեր կրթական համակարգի հետ համեմատած՝ կարելի է նշել ,կյանքի դպրոցիե հետևյալ թերությունները. շրջանավարտների ընդհանուր կրթվածության ցածր մակարդակը, գիտականության թերագնահատումը, որի հետևանքը մասնագիտական գործունեության ընթացքում ավելի շատ հակումն է փորձերի և սխալների մեթոդով գործողությունը և այլն: Սակայն կյանքի դպրոցը մեր համեմատ ունի առավելություններ. գլխավոր խնդիրն ուժեղ անհատականության ձևավորումն ու զարգացումն է, տաղանդավոր աշակերտների հատուկ հովանավորությունը, ժողովրդավարական մշակույթի արմատավորումը, ճկուն կրթական ծրագրերը, որոնք հարմարեցված են անհատական-տարբերակված ուսումնառությանը:

Աշխատանքի կամ հմտության բարձրագույն դպրոցի[1] առաքելությունը, ընդհանուր կրթվածության հետ միասին, ուղղված է մասնագիտական աշխատանքը սովորեցնելուն, այսինքն՝ կրթության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում սովորողի գործնական պատրաստվածությանը, որի համար ստեղծվում են հատուկ պայմաններ: Պատկերավոր ասած՝

Տարածված է Ֆրանսիայում, Հոլանդիայում, Բելգիայում և այլուր:

կարևորն այն չէ, թե դու ինչ գիտես, այլ այն, թե դու ինչ ես կարողանում անել: Եթե համեմատենք մեր դպրոցի հետ, ապա կտեսնենք, որ մեր դպրոցում կան ,հմտության դպրոցիե շատ տարրեր: Սակայն, այդուհանդերձ, մեզ մոտ չեն շեշտադրված հումանիտար պատրաստվածությունը, մասնագիտական աշխատանքային դաստիարակությունը: Մեր դպրոցում թույլ են գործնական պատրաստվածությունը և մասնակցությունն գործնական աշխատանքին, բացակայում են դրա համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան և կազմակերպական ձևերը:

Իմացության դպրոցում[1] հարուստ, բազմակողմանի, ամուր գիտելիքները մանկավարժական ողջ համակարգի հիմքն են: Մյուս բնութագրական գծերից են կրթամանկավարժական գործընթացի հստակ կարգավորվածությունը, կազմակերպվածությունը, կարգուկանոնը, կառուցման կենտրոնացվածությունը, պահանջների միասնականությունը, մշտական վերահսկողությունը և պահանջկոտությունը: Այս կրթական համակարգը խարսխված է թվարկված երկրների ժողովուրդների հոգեմտակերպի վրա: Մեր համակարգն իր հիմնական գծերով, եթե, իհարկե, հաշվի չառնենք վերջին տարիների բարեփոխումները, որոնք որոշակիորեն մերձեցում են մեզ հմտության դպրոցին, իմացության դպրոց է:

Իմացության դպրոցի առավելություններից են՝ ձգտումը հիմնարար կրթության, հստակությունը կազմակերպման և մեթոդիկայի հարցերում, կառավարելիությունը և բարձր մակարդակի հասնող կարգուկանոնը,

---

Տարածված է Գերմանիայում, Ավստրիայում, Չեխիայում, Դանիայում, Արևելյան Եվրոպայի շատ երկրներում և հետխորհրդային տարածքում:

սովորողներին հաղորդվող գիտելիքների և ունակությունների անհամեմատ ավելի շատ հարստությունը: Բացի այդ ,իմացության դպրոցը որոշակի հաջողություններ ունի սովորողների անհատականության զարգացման գործում (լայն աշխարհայացք, համառ համակարգված և բարեխիղճ աշխատանքին հարմարվել-սովորելը): Սակայն ,իմացության դպրոցն ունի նաև էական թերություններ, որոնցից կարելի է նշել՝ կրթությունը կարծես թե վերածվում է միակողմանի հոսքի՝ ուսուցչից դեպի սովորողը, ինչը ստեղծում է վտանգավոր նախադրյալ վերածվելու ,անգիր անելու դպրոցի. անտեսվում է անհատական աշխատանքը սովորողների հետ, միջակացնում է սովորողների պատրաստվածությունը, գրեթե չի իրացնում անհատական մոտեցումը, արդյունքում չի խթանում տաղանդների զարգացումը:

Այսպիսով, իրավական կրթական դպրոցների նկարագրությունից ելնելով՝ կարող ենք պնդել, որ ճիշտը ոչ թե այս կամ այն դպրոցին միանշանակ տուրք տալն է, այլ մեր դպրոցի հիմքերը պահպանելով՝ բարեփոխելն է, ինչը կոչված է հաղթահարելու նրա թերությունները, այն մոտեցնելու հմտությանը և կյանքի բարձրագույն դպրոցներին:

Բարեփոխումների ընթացքում պետք է նկատի ունենալ, որ իրավագիտակից քաղաքացու առկայությունն ունի սոցիալ-հանրային, այլ ոչ թե մասնավոր բնույթ: Այդ առանձնահատկությունը պայմանավորում է քաղաքացու նկարագրի բազմատարրությունը, որը կարելի է արտահայտել իմանալ. կարողանալ. լինել կարգախոսով: Այս կարգախոսից բխում է, որ քաղաքացու համար խիստ անհրաժեշտ են, նախ՝ իմացությունը՝ իրավական գիտելիքները, այնուհետև՝ աշխատանքի գործնական

հմտությունները, և վերջապես, անձնական որակները, բարոյաարժեքային կողմնորոշումները:

Գիտելիքները, գործնական հմտությունները, անձնական որակներն մարդու մասնագիտական նկարագրի հավասարարժեք բաղադրատարրերն են: Դրանցից մեկի գերագնահատումը կամ թերագնահատումը միշտ հանգեցնում է մարդու նկարագրի խեղաթյուրմանը: Գրոշի արժեք չունեն սովորելու տարիներին ստացած իրավական գիտելիքները, եթե շրջանավարտը չունի դրանք գործնականում կիրառելու հմտություններ, չի տիրապետում տարբեր ոլորտներում դրանց իրացման եղանակներին: Ի վերջո, առաջին երկու բաղադրատարրերը, չնայած իրենց առկայությանը, կարող են չեզոքացվել, եթե մասնագետի բարոյաէթիկական որակները պատշաճ բարձրության վրա չեն, եթե նրա անձնական որակները, ընդհանուր դիրքորոշումը չեն կողմնորոշված դեպի իրավական բարձրագույն արժեքները, արդարությունը, չեն համապատասխանում էթիկայի կանոններին:

Նայելով աշխարհի կրթական քարտեզին՝ մենք տեսնում ենք, որ երկրները չեն շտապում հրաժարվել իրենց կրթամանկավարժական համակարգերի հատկապես ավանդականությունից՝ համարելով այն ոչ թե հետամնացություն, այլ՝ ընդհակառակը, ուժեղ կրթություն, որը համապատասխանում է երկրի յուրահատկություններին, պատմությանը, ապրելակերպին և փորձին: Բայց դա չի նշանակում, որ մենք պետք է հրաժարվենք փոփոխություններից և բարեփոխիչ ոգուց: Նվաճումների նկատմամբ քննադատական վերաբերմունքը դրդում է համարձակ քայլեր ձեռնարկել իրավաբանական կրթական համակարգը կատարելագործելու

ուղղությամբ, այդ թվում՝ ինտեգրացիոն գործընթացները նկատի ունենալով:

Մենք առաջարկում ենք այդ բարեփոխումների հետևյալ ուղղությունները.

ա) հասարակության մեջ իրավական համուսուցման և իրավական կրթության հեղինակության, նրա առաջնայնության բարձրացում, որը պետք է ապահովվի հանրային և պետական ահռելի բարոյական, իրավակարգավորիչ, ֆինանսական հովանավորությամբ: Կրթական համակարգն իր բոլոր բաղադրատարրերով պետք է ենթարկվի մոնիտորինգի իրավական դաստիարակության և իրավական կրթության դիրքերից,

բ) իրավական կրթության վրա կատարվող ծախսերի ավելացում,

գ) իրավական կրթության անընդհատության, շարունակականության, մատչելիության ապահովում:

Այստեղ հիմնախնդիրն այն է, որ իրավական կրթությունը հանրակրթական մակարդակում չունի, այնինչ պետք է ունենար իր բովանդակային կայուն և հիմնարար նախադրյալները: Շատ կարևոր է իրավական կրթության զուգահեռականության (այսինքն՝ երկու կրթություններ ստանալը) ապահովումը,

Կրթության համակարգը, այդ թվում՝ իրավական, իրենից ներկայացնում է կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող կրթական ծրագրերի (հանրակրթական և մասնագիտական), ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման փոխկապակցված ամբողջություն: Առանց իրավական

համաուսուցման և իրավական կրթության զարգացման պետական հայեցակարգի՝ բարեփոխումները դատապարտված են անհաջողության:

Եթե, օրինակ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, պայմանների, ձևերի, մեթոդների կատարելագործումը, դասավանդողի և սովորողի համագործակցության ապահովումը, ուսումնական պարապմունքների հուզականության ուժեղացումը և ձանձրույթի վերացումը, սովորելու բազմակողմանի շարժառիթավորման, սովորողի ընդգրկվածության, բարեխղճության, ինքնակրթության ուժեղացումը դպրոցի մակարդակով լուծվող խնդիր է, ապա բարձրագույն իրավաբանական կրթության, հետբուհական կրթության կազմակերպման և կառավարման կատարելագործումը, ապակենտրոնացվածության և առանձնացվածության ծայրահեղությունների հաղթահարումը կառավարական իրավասություն է:

Այսպիսով, փոփոխություններն ու բարեփոխումներն անհրաժեշտ են: Բարեփոխումները պետք է լինեն՝

ա) խորապես մտածված և համակարգված,

բ) ամբողջական և համալիր,

գ) համաշխարհային փորձի և հայաստանյան իրողությունների հաշվառմամբ,

դ) էժան և ֆինանսապես ապահովված,

ե) փորձարկված և արդյունավետ:

Պետք է հաշվարկված ընտրել բարեփոխման իրականացման արդյունավետ ուղիներ, հայեցակարգ, ծրագիր, այսինքն՝ հետևողականորեն կենսագործվող միջոցառումների համակարգ՝ ուղղված իրավական համաուսուցման և կրթության նպատակների, խնդիրների,

կազմակերպական ձևերի, բովանդակության և կառավարման հիմնահարցերի լուծմանը, նրա մակարդակների և ձևերի ներդաշնակեցմանը, կրթության մեթոդաբանության և իրավագիտակից քաղաքացու պատրաստման մեթոդիկայի կատարելագործմանը:

1.2 Իրավական դաստիարակության դերը իրավագիտակցության ձևավորման գործում

Իրավական դաստիարակությունը որպես իրավական մշակույթի գործոն և իրավական նիհիլիզմի հաղթահարման միջոցը մեկնաբանվում և իրավական դաստիարակությունը դիտարկվում է որպես իրավական նիհիլիզմի հաղթահարման միջոց: Իրավական գիտակցության ձևախեղումներից մեկն է իրավական նիհիլիզմը՝ մի երևույթ, որը բացասաբար է ազդում օրինականության, հասարակական կարգուկանոնի, նաև անձի դրական ակտիվության զարգացման վրա: Տվյալ իրավիճակն իրավական նիհիլիզմի հետազոտումը դարձնում է արդիական և հրատապ՝ ներգրավելով այդ հարցում հումանիտար գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետների ուշադրությունը:

Իրավական նիհիլիզմի հաղթահարման էական գործոն է իրավական և բարոյական արժեքների խոր փոխկապակցվածության հաստատումը:

Ինչպես բոլոր մանկավարժական երևույթներին, այնպես էլ իրավական դաստիարակությանը բնորոշ են պատճառահետևանքային կապերը՝

մանկավարժական ազդեցության և նրանց արդյունքների միջև: Կարևորներից մեկն այն է, որ դաստիարակում է ոչ միայն կոնկրետ մարդը (ուսուցիչը կամ դաստիարակը), այլ նաև առօրյա կյանքը, և կարևոր է, որ դրանց ազդեցությունները լինեն համաձայնեցված: Այս պատճառահետևանքային կախվածությունն իր արտացոլումն է գտնում հատուկ մանկավարժական սկզբունքներում, որոնց հիման վրա խորհուրդ է տրվում կառուցել իրավական դաստիարակությունը.

- հարմարվողականության սկզբունք
- համընդգրկունության և անընդհատության սկզբունք
- պետության իրավական մոտեցման սկզբունք
- բարոյական և իրավական դաստիարակության ամբողջության սկզբունք
- սոցիալ-իրավական սպասարկման սկզբունք
- իրավունքի և պատասխանատվության սկզբունք
- սոցիալական իրավապաշտպան ու իրավապահպան գործունեության մեջ քաղաքացիների ակտիվ մասնակցության սկզբունք
- իրավական ինքնադաստիարակության սկզբունք:

Իրավական դաստիարակության, իրավագիտակցության և իրավական մշակույթի արժեբանական հայեցակետը մեկնաբանվում է, որ արդի մանկավարժության և իրավական կրթության մեջ իրավական դաստիարակության խնդիրները նոր հնչեղություն են ձեռք բերում: Դրանց բարդությունն ու բազմապլանայնությունը ենթադրում են բազմաձև մեթոդների կիրառում: Իրավունքի արժեբանությունն առաջարկում է մի շարք հնարավորություններ՝ իրավադաստիարակչական ներգործության կատարելագործման արդյունավետ եղանակների որոշարկման համար: Այս

տեսանկյունից իրավական արժեքների յուրացումը ներկայանում է իրավական դաստիարակության կարևորագույն նպատակներով ու բովանդակությամբ:

Իրավական դաստիարակության գործընթացը՝ որպես անձի արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորում, երեք հիմնական փուլ ունի.

1. սուբյեկտի՝ հնարավոր արժեքային կողմնորոշումների վերաբերյալ անհրաժեշտ իրազեկումների ձեռք բերում,
2. մարդու՝ արժեքային կողմնորոշումների մասին ձեռք բերած գիտելիքների՝ անդրադարձման միջոցով իրավական վարքի ներքին դրվածքի վերածում,
3. հասարակական կյանքում և իրավական վարքի մեջ տվյալ կողմնորոշումների նկատմամբ արժեքային գիտելիքների և դրվածքների իրացում:

Իրավական մշակույթի արժեբանական գործառույթը կոչված է լուծելու եռամիասնական խնդիր՝

1) զարգացնել անձի ազատության ըմբռնումը՝ որպես կարևորագույն արժեք,

2) ներմուծել այդ ըմբռնումը կամ հասկացությունը օրենսդրի, օրենքը կիրառողի և յուրաքանչյուր քաղաքացու գիտակցություն,

3) այդ գաղափարը դարձնել ամեն մի իրավական փորձառության կարևորագույն չափանիշ:

1.3 Իրավաչափ վարքագիծը որպես նպատակ

Իրավաբանական գիտություններն ավանդաբար անդրադարձել են իրավաչափ վարքագծի հիմնախնդրին իրավախախտ վարքագծի հետ հակադրության լույսի ներքո: Իրավաբանական հոգեբանության, կրիմինոլոգիայի և մարդու վարքագծի՝ իրավունքին համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրող այլ ճյուղային և միջճյուղային գիտությունների շրջանակում ավելի մեծ թիվ են կազմում իրավախախտ վարքագծի և դրա շարժառիթների մասին ուսումնասիրությունները: Ինչ վերաբերում է իրավաչափ վարքագծին, ապա այն իրավունքի տեսության մեջ հաճախ քննարկվում է իրավագիտակցության և իրավական մշակույթի համատեքստում: Ավելին՝ եթե ամփոփենք իրավաչափ վարքագծի տեսակների վերաբերյալ առավել տարածված մոտեցումները, ստացվում է, որ ըստ անձնական շարժառիթի՝ իրավաչափ վարքագիծը կարող է դրսևորվել հետևյալ տեսակներով.

ա) իրավունքի նորմերի՝ որպես առավել նպատակահարմար և հանրօգուտ կողմնորոշիչների գիտակցման կամ, այլ կերպ ասած, իրավունքի արժեքի գիտակցման վրա հիմնված իրավաչափ վարքագիծ,

բ) կոնֆորմիստական վարքագիծ, որի դեպքում վարքագիծը համապատասխանեցվում է իրավունքի նորմերին հենց այնպես, առանց դրա արժեքի մեջ անձի վստահության կամ իրավունքի բովանդակության հետ կապված որևէ կասկածների առկայության,

գ) իրավաչափ վարքագիծ՝ դրանից շեղվելու համար պատասխանատվությունից կամ պատժից վախի առկայության պատճառով:

Նշված բոլոր դեպքերում գործ ունենք այնպիսի վարքագծի հետ, որն իրավունքի նորմերին համապատասխանեցվում է գիտակցաբար: Որոշ դեպքերում դա տեղի է ունենում բարձր իրավական մշակույթ ունեցող սուբյեկտի կողմից արժևորման արդյունքում, մյուս պարագայում՝ պարզապես ենթարկվելու և կարգուկանոնի ձգտման կամ վախի թելադրանքով՝ դրանց գիտակցման դեպքում: Նույնիսկ այն դեպքում, եթե գործ ունենք իրավական հոգեբանության մակարդակում առօրեական իրավագիտակցության հետ՝ հույզերի կամ ապրումների տեսքով, դրանց հիման վրա անձը կատարում է վարքագծի մոդելի գիտակցական ընտրություն:

Հետևաբար, միանգամայն տրամաբանական է այն եզրահանգումը, որ իրավաչափ վարքագծի առավել մեծ ծավալ և իրավունքի սոցիալական նշանակության կենսագործում հնարավոր է ապահովել այն հասարակությունում, որտեղ բարձր է իրավագիտակցության մակարդակը, և կա ձևավորված իրավական մշակույթ: Որքան ավելի զարգացած են հասարակությունում իրավական ավանդույթները, այնքան ավելի զարգացած է անձի հարգանքն իրավունքի և օրենսդրության հանդեպ[1]:

Այս ամենը որևէ կասկած չէր հարուցի, եթե ելնեինք այն կանխադրույթից, որ մարդը ռացիոնալ էակ է: Սակայն սոցիալական

St՛u Провалинский Д.И., Мотивация как элемент механизма реализации правовых стимулов. Теория и практика общественного развития, 2014, N 17, էջ 116:

գիտությունների վերջին ձեռքբերումները վկայում են, որ մարդու վարքագիծը միշտ չէ, որ հիմքում ունի ռացիոնալ ընտրությունը:

Հարց է առաջանում. արդյո՞ք իրավաչափ վարքագծի շարժառիթների մեջ գիտակցության դերն իրոք անփոխարինելի է: Նշանակու՞մ է դա արդյոք, որ քանի որ մարդը ռացիոնալ չէ, իրավաչափ վարքագիծը՝ որպես ռացիոնալ ընտրություն, միշտ լինելու է, բացարձակ առումով, անհասանելի: Հնարավո՞ր է արդյոք նպաստել անձի կողմից վարքագծի այն կամ այն մոդելի ընտրությանը առանց նրա իրավագիտակցության և ռացիոնալ ընտրության դաշտ մտնելու: Վերջապես, արդյո՞ք այս բոլոր հարցերը պետք է հետաքրքրեն մանկավարժությանը, թե դրանց հետազոտմամբ զբաղվում են հոգեբանությունը, տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և մյուս սոցիալական գիտությունները, որոնք ուսումնասիրում են մարդու վարքագիծը:

Իրավաչափ վարքագծի շարժառիթներն ուսումնասիրելիս կարևոր է հասկանալ, թե ինչն է ,ձգանե համարվում իրավաչափ վարքագծի համար: Ըստ էության, ինչպես և ցանկացած այլ վարքագծի դեպքում, դա շարժառիթն է: Սակայն այն հարցում, թե ինչպես է անձն ընտրում այս կամ այն շարժառիթը, որի հիման վրա էլ դրսևորում այս կամ այն վարքագիծը, գիտնականները միակարծիք չեն: Որպես շարժառիթի հիմք երբեմն դիտարկվում է անձի սոցիալական դիրքորոշումը՝ սուբյեկտի ամբողջական դինամիկ վիճակը, պատրաստականությունը որոշակի ակտիվության, որը պայմանավորված է երկու գործոններով՝ մի կողմից սուբյեկտի պահանջմունքներով, շահերով, նպատակով, մյուս կողմից՝ համապատասխան օբյեկտիվ իրավիճակով: Ահա այս սոցիալական դիրքորոշումների մեջ իրավական դիրքորոշումն առանձնանում է նրանով,

որ ձևավորվում է որպես իրավունքի նորմերի գիտակցում, հասկացում, և հետևաբար, թեև իրավական զգացմունքների, հույզերի, ապրումների նշանակությունն իրավունքի ճանաչման գործընթացում չի կարող նսեմացվել, առաջնային դեր է խաղում դիրքորոշման կոգնիտիվ, ոչ թե

սենզիտիվ տարրը[1]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավական շարժառիթի հիմքում հիրավի ընկած է իրավական դիրքորոշումը, սակայն ի տարբերություն շարժառիթի, որը մարդու կողմից տվյալ նպատակի՝ տվյալ պահանջմունքի բավարարմանը վերաբերելու գիտակցումն է, դիրքորոշումն անգիտակցականի ոլորտից է: Եթե անձի շարժառիթները հնարավոր է հասկանալ՝ վերլուծելով նրա պահանջմունքները, շահերը, նպատակը և օբյեկտիվ իրավիճակը, ապա դիրքորոշումը հաճախ հասկանալի չէ նույնիսկ այն կրող սուբյեկտի համար[2]: Խնդիրն այն է, որ անձի մոտ իրավական դիրքորոշումների ձևավորումը բարդ գործընթաց է, որը ներառում է փոխազդող ներքին և արտաքին գործոնների ամբողջություն՝ ուղղված արտաքին աշխարհից ստացվող իրավական տեղեկատվության փոխակերպմանը թե՛ իրավական գիտելիքի և թե՛ մարդու որոշակի վերաբերմունքի իրավունքի, իրավակարգի և այլ իրավական երևույթների նկատմամբ: Անձն ընտրանքային վերաբերմունք

---

[1] Տե՛ս Мещерякова А.В., Мещерякова С.Н., О формировании пускового механизма правового поведения личности. Философия права, 2015, N 1 (68), էջ 84:

[2] Տե՛ս Зарубаева Е. Ю., Мотивация и установка как психолого-правовые факторы правомерного поведения личности. Сибирский юридический вестник, 2004, N 4, էջ 23:

ունի իրավական տեղեկատվության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ շարժառիթի ընտրության պահին տարբեր սոցիալական դիրքորոշումներ,վերաբերմունք ունի իրավական տեղեկատվության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ շարժառիթի ընտրության պահին տարբեր սոցիալական դիրքորոշումներ ազդում են մարդու ընտրության վրա միաժամանակ, և կախված պայմաններից՝ իրավական դիրքորոշումը (անձի իրավագիտակցության դրսևորումը) կարող է կանխորոշել, կարող է նաև չկանխորոշել անձի կողմից վարքագծի ընտրությունը: Հետաքրքիր է, որ նույն հետևությանն են հանգում առօրեական իրավագիտակցության և իրավական գնահատականի հիմնահարցերն ուսումնասիրող հեղինակները, ըստ որոնց՝ անձի մոտ իրավական գնահատականը ձևավորվում է իրավական երևույթներին ոչ միայն ռացիոնալ, այլև հուզական գնահատական տալու միջոցով[1]:

Վերը քննարկված հարցերը բերում են այն հետևության, որ անձի կողմից իր վարքագծի ընտրությունը բացառապես գիտակցական գործընթաց չէ, և հետևաբար, իրավագիտակցության բարձրացումը ոչ բոլոր դեպքերում կարող է խթանել իրավաչափ ցանկալի վարքագծի դրսևորումը: Միևնույն ժամանակ, դրանից բխում է մեկ այլ կարևոր հետևություն. եթե հնարավոր է կառավարել անձի կողմից կատարվող ընտրության վրա ազդող որոշ գործոններ, այլ կերպ ասած՝ եթե հնարավոր է ուղղորդել նրա կողմից վարքագծի ընտրությունն այնպես, որ արդյունքում դրսևորվի իրավաչափ ցանկալի վարքագիծ, դա կարող է դառնալ արդյունավետ ռազմավարություն հասարակության այն հատվածը

Տե՛ս, օրինակ, Максимов Г.Б., Особенности обыденной правовой оценки (вопросы теории государства и права). Бизнес в законе, 2013, N 1, էջ 32:

թիրախավորելու համար, որի իրավագիտակցության բարձրացումը պետության համար անհրաժեշտ գործընթաց է:

Պետք է նշել, որ վարքագիծը որպես հոգեկանի երևույթ ուսումնասիրող հոգեբանական տեսությունը՝ բիհեյվորիզմը, նոր չէ: Բիհեյվորիզմին հաջորդեց նեոբիհեյվորիզմը, հոգեբանական այս տեսության արդյունքների հիման վրա 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց միջճյուղային այնպիսի ուղղություն, ինչպիսին է վարքագծային տնտեսագիտությունը (behavioual economics), որը հետազոտում է հոգեբանական, կոգնիտիվ, հուզական, մշակութային և սոցիալական գործոնների ազդեցությունն անհատների և հաստատությունների տնտեսական որոշումների վրա և այդ որոշումների տարբերությունն այն որոշումներից, որոնք ենթադրաբար պետք է կայացվեին տնտեսագիտության դասական տեսության տեսանկյունից: 21-րդ դարի սկիզբը նշանավորվեց վարքագծային տնտեսագիտության ոլորտում կարևորագույն նվաճումների համար երկու Նոբելյան մրցանակներով: Վերջին մրցանակը տրվեց 2017 թ. Ռիչարդ Թալերին այն գիտական եզրահանգման համար, որ մարդիկ կանխատեսելիորեն իռացիոնալ են[1]: Թալերի և Սանսթեյնի կողմից առաջ է քաշվում այն դրույթը, որ ի տարբերություն տնտեսագիտության մեջ և այլ սոցիալական գիտություններում որպես նախադրյալ ընդունվող ,homo economicus-ի՝

2008 թ. լույս տեսավ տնտեսագետ Ռիչարդ Թալերի և Հարվարդի համալսարանի իրավաբանական դպրոցի դրոֆեսոր, իրավագետ Քաս Սանսթեյնի համահեղինակությամբ «Nudge: Improving Decisions About Health, Vealth, and Happiness» գիրքը, որը հեղափոխություն էր վարքագծային գիտության ոլորտում և իրականում ,ուրս բերեց նշված մոտեցումների կիրառման հնարավորությունը տնտեսական հարաբերությունների ,ջանակից՝ տարածելով դրանք նաև հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման, .անրային քաղաքականության և այլ ոլորտների վրա: Այսօր կիրառվում է «վարքագծային գիտություն» behavioral science) եզրույթը, որը կոչված է ընդգծելու ճանաչողության այս ոլորտի միջճյուղային բնույթը: ե՛ս https://en.wikipedia.org/wiki/Nudge_(book):

ռացիոնալ և ճիշտ լուծումներ ընտրող մարդու՝ ,homo sapiencete-ը իր ընտրության մեջ կատարում է կանխատեսելի սխալներ, քանի որ առաջնորդվում է էվրիստիկական մոտեցումներով, թյուրընկալումներով և առասպելներով: Բացի դրանից՝ մարդը կրում է իր սոցիալական շփումների ազդեցությունը: Նորությունն այս ամենի մեջ այն է, որ մարդուն իռացիոնալ, ոչ տրամաբանական վարքագծի մղող գործոնների իմացությունը (իսկ այդ գործոնները[1] վաղուց ուսումնասիրվում են սոցիալական գիտությունների կողմից) թույլ է տալիս կանխատեսել անձի կողմից այդպիսի վարքագիծ ցուցաբերելու հավանականությունը: Իհարկե, գիտակցական գործոնների և կամքի ազդեցությունը կարող են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխել անձի կողմից որոշման կայացման ընթացքը՝ ավելի զորեղ գտնվելով: Բայց մյուս դեպքերում գործ կունենանք կանխատեսելի իռացիոնալ վարքագծի հետ:

Եթե վարքագիծը կարելի է կանխատեսել, ուրեմն կարելի է նաև ազդել դրա վրա՝ ,փափուկ ուղղորդմանե (nudge) միջոցով: Սոցիալական գիտությունների տեսանկյունից ,nudge-ի գաղափարն առաջ բերեց ազատականության նոր ուղղություն՝ ազատական նահապետականություն (libertarian paternalism), որի հիմնական կանխադրույթը հետևյալն է. հանրային և մասնավոր կազմակերպությունների համար հնարավոր և լեգիտիմ է ազդել մարդկանց վարքագծի վրա՝ միաժամանակ չմիջամտելով ընտրության ազատության սկզբունքին: Փափուկ ուղղորդման գործընթացն

Դրանց շարքում՝ «հոտային» բնազդը, «ստատուս քվո» վիճակին հակվածությունը, ներկայացուցչական վրիստիկան և այլն:

իրենից ներկայացնում է ,ընտրության ճարտարապետությունե (choice architecture), որի պայմաններում վարքագծային գիտությունը գործի է դրվում մարդկանց վարքագծի վրա ազդեցության ,փափուկե միջոցների մշակման և կիրառման համար: Փափուկ ուղղորդումն անհրաժեշտ է տարբերակել անձի վարքագծի վրա ազդեցության այլ եղանակներից՝ օրենսդրության իմպերատիվ կարգավորումներից, իրավական, սոցիալական և տնտեսական խթաններից, հիմնավորումներ և պատճառաբանություն պարունակող տեղեկատվության տրամադրումից: Հետևապես, փափուկ ուղղորդումն աղերսներ չունի արգելման կամ համոզման հետ: Այսպիսով՝ փափուկ ուղղորդումը գործողություն է՝ ներազդելու մարդու դատողության, ընտրության և վարքագծի վրա կանխատեսելի ձևով, որը մշակվում է՝ հաշվի առնելով մարդու անհատական և սոցիալական միջավայրերում իրենց շահերից բխող ողջամիտ որոշումներ կայացնելուն խոչընդոտող գործոնները՝ կոգնիտիվ սահմանները, կանխակալ վերաբերմունքը, սովորությունները, առօրյան[1], և ուղղված է այդ գործոնների ազդեցության նվազեցմանը[2]: Փափուկ ուղղորդման կենցաղային լավ օրինակ է մանկական սննդի օբյեկտներում թարմ բանջարեղենի և մրգի ցուցադրությունը երեխայի աչքի մակարդակի վրա, ինչի հետևանքով աճում են օգտակար սննդամթերքի վաճառքները:

Ազատական նահապետականության պարադիգման, անշուշտ, ազատական է, որովհետև ճանաչում է անձի ,չուղղորդվելու ազատությունը:

Տե՛ս Pelle Guldborg Hansen, "The Definition of Nudge and Libertarian Paternalism: Does the Hand Fit the Glove", European Journal of Risk Regulation, 2016, N 1, էջ 20 (http://www.lexxion.de/pdf/ejrr/Pelle_2016_01.pdf):

«Nudge»-ի կիրառման նպատակը դրա բնորոշման մեջ ներառելու մասին գիտական վեճերը չեն դադարում: Սվյալ հոդվածի շրջանակում առաջարկվում է ներառել սոցիալապես նշանակալի նպատակը բնորոշման մեջ, որովհետև պետության և իրավունքի տեսության խնդիրներից ելնելով՝ փափուկ

Բայց մյուս կողմից այն նահապետական է (պատեռնալիստական), որովհետև ճանաչում է հանրային և մասնավոր կազմակերպությունների (այս աշխատանքի նպատակներից ելնելով՝ առաջին հերթին պետության) իրավասությունը՝ ներազդելու մարդկանց վարքագծի վրա նույնիսկ այն դեպքերում, երբ դա չի շոշափում երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դրդելու նրանց կայացնել որոշումներ իրենց իրավունքների և օրինական շահերի առավել լիարժեք իրականացման և հասարակության բարեկեցության համար[1]:

Փորձենք վերլուծել փափուկ ուղղորդումն իրավական տեսանկյունից և հասկանանք, թե ինչ դեր կարող է այն խաղալ իրավաչափ վարքագծի խթանման առումով: Ակնհայտ է, որ մեզ առաջին հերթին հետաքրքրելու են վարքագծի այն ասպեկտները, որոնց համապատասխանեցումն օրենքին հնարավոր չէ ապահովել զուտ իմպերատիվ նորմերի սահմանման և դրանց խախտման դեպքում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կատարյալ իրացման միջոցով: Ավելին՝ ազատական ժողովրդավարական հասարակությունում փափուկ ուղղորդումը կարող է կարևոր այլընտրանք դառնալ պատասխանատվության վախին՝ որպես իրավաչափ վարքագծի ապահովման գործոնի: Այն կարող է մեծ դեր խաղալ իմպերատիվ նորմերի կենսագործման խնդիրների լուծման համար[2]:

Տե՛ս Richard H. Thaler & Cass R. Sunstein, "Libertarian Paternalism Is Not an Oxymoron" (University of Chicago 'ublic Law & Legal Theory Working Paper No. 43, 2003), էջ 4 http://www.law.uchicago.edu/academics/publiclaw/index. html):

Վարքագծային գիտությունը հաջողությամբ կիրառվում է հարկային իրավահարաբերությունների .արգավորման մեջ: Որպես օրինակ կարելի է վկայակոչել Մեծ Բրիտանիայում հարկատուներին ուղարկվող .իշեցման ձևակերպման մեջ կատարված փոփոխությունը, որի արդյունքում սահմանված ժամկետում .արկերի վճարումն աճեց 6 տոկոսով: Նմանատիպ միջամտությունը Լեհաստանում հանգեցրեց 15 տոկոսով .աճի, իսկ Կոստա Ռիկայում ժամկետում ներկայացվող հարկային հայտարարագրերի քանակը եռապատկվեց

Այդուհանդերձ, քանի որ սույն աշխատանքի շրջանակում քննարկվում է ցանկալի վարքագծի իրավական խթանման հիմնահարցը, անդրադառնանք այնպիսի իրավաչափ վարքագծին, որը ձևավորվում է դիսպոզիտիվ նորմերի իրականացման արդյունքում, ենթադրում է քաղաքացիական հասարակության մեջ ազատ և գիտակից սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և օրինական շահերի լիարժեք իրականացում և նախաձեռնողականություն՝ իրավական ազատության պայմաններում: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ պետությունն ,անտարբերե չէ նման դեպքերում իրավունքի իրականացման ճակատագրին: Եթե, օրինակ, անդրադառնանք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածին, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը, ինչպես նաև 12-րդ, 86-րդ հոդվածներին, պարզ է դառնում, որ անհատի ակտիվության, նախաձեռնողականության և ցանկալի վարքագծի խթանումը պետության համար պոզիտիվ պարտականություն է: Քանի որ պետության միջամտությունն անձի վարքագծին հնարավոր է միայն իրավական ձևի շրջանակում, հետևաբար փափուկ ուղղորդումը՝ որպես սոցիալապես նշանակալի ցանկալի վարքագծի խթանման միջոց, պետությունը կարող է կիրառել միայն իրավական գործիքակազմի կիրառմամբ:

Կարելի է բերել այլ օրինակներ, ինչպես նաև թվարկել Հայաստանի Հանրապետությունում ցանկալի վարքագծի դրսևորման դաշտում առկա բազում խնդիրներ, որոնց լուծման համար վարքագծային գիտության նվաճումները կարող են հաջողությամբ օգտագործվել: Կարևոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. եթե փափուկ ուղղորդումը կատարվում է պետության կողմից՝ իրավական նորմերի սահմանման միջոցով, այն պետք է իրականացվի մի շարք սկզբունքների պահպանմամբ.

- Հանրային իշխանությունը միջամտությունը մշակելիս և իրականացնելիս ելնում է մարդու՝ բարձրագույն արժեք լինելու կանխադրույթից ու սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով:
- Փափուկ ուղղորդումը կարող է իրականացվել միայն այնպիսի գործողությունների շրջանակում, որոնց համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
- Միջամտությունը պետք է լինի իրավական, ուղղված լինի հանրորեն նշանակալի բարիքի և խթանի հանրորեն կարևոր ցանկալի վարքագիծ:
- Միջամտությունը պետք է հիմնված լինի հավաստի տվյալների վրա:
- Միջամտությունը նախագծելիս և իրականացնելիս պետք է հաշվի առնվեն հանրային վստահության և էթիկայի հետ կապված հարցերը:

Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ վարքագծային գիտությունը փորձարարական գիտություն է, հետևաբար նախանշված միջամտությունները կարող են ժամանակի ընթացքում փոփոխությունների կարիք ունենալ՝ կապված թիրախային խմբի վարքագծի վրա ազդող գործոնների փոփոխության հետ:

Ամփոփելով վերոհիշյալը՝ պետք է նշել, որ վարքագծային գիտության նվաճումները և փափուկ ուղղորդման երևույթն օժտված են հասարակական հարաբերություններում մարդկանց վարքագծի վրա արագ ազդելու ներուժով և կարող են էապես նպաստել իրավունքի նորմերի կենսագործմանն ուղղված պետության ջանքերին: Սակայն փափուկ ուղղորդման արդյունքում անհատի մոտ չի ձևավորվում գիտակցական արժեքային վերաբերմունք իր կողմից դրսևորած վարքագծի վերաբերյալ: Պատահական չէ, որ փափուկ ուղղորդման հիմնական քննադատությունը հնչում է հենց այն հարցի հետ կապված, որ վարքագծային գիտության նվաճումների կիրառմամբ մարդկանց վարքագծի երկարաժամկետ փոփոխություն հնարավոր չէ: Ինչպես նշել է Մեծ Բրիտանիայում կառավարության կողմից վարքագծային գիտության նվաճումների կիրառման պրակտիկայի վերաբերյալ խորհրդարանական զեկույցի կապակցությամբ Լորդերի պալատի գիտության և տեխնոլոգիայի հարցերով հանձնաժողովի աշխատանքային խմբի նախագահ Ջուլիա Նոյբերգերը, միայն փափուկ ուղղորդումը բավարար չէ. այն պետք է զուգակցվի առաջին հերթին իրավական կարգավորման բարեփոխումներով՝ եթե մենք իրոք ցանկանում ենք փոխել մարդկանց վարքագիծը, դա տևական գործընթաց է, վարքագծի լիարժեք փոփոխությունը պահանջում է 20-25 տարվա ժամկետ[1]: Հետևաբար, փափուկ ուղղորդումը կարող է արդյունավետ լինել, եթե զուգակցվում է

---

https://www.theguardian.com/society/2011/jul/17/julia-neuberger-nudge-bigsociety

ամալիր միջոցառումների կարևորության մասին դիրքորոշումներ կարող ենք տեսնել նաև հետխորհրդային .րավաբանական գիտության ներկայացուցիչների մոտ: Տե՛ս, օրինակ, Тихомиров Ю.А., Поведенческий еханизм действия права. Вопросы государственного и муниципального управления,
011, N 4, էջ 99:

իրավական կրթության, դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորմանն ուղղված նպատակային քաղաքականության իրականացմամբ և վարքագծի դրական մոդելների իրավական խթանման այլ միջոցների կիրառմամբ: Ցանկալի վարքագծի դրական մոդելների փորձարկումը փափուկ ուղղորդման միջոցով, խթանումը և ապա արմատավորումը իրավագիտակցության և իրավական մշակույթի միջոցով համալիր մոտեցում է, որը կարող է ապահովել կայուն երկարաժամկետ դրական արդյունքներ իրավաչափ վարքագծի դրսևորման առումով:

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1 Իրավական դաստիարակության մանկավարժական պայմանները և զարգացման միտումները ՀՀ-ում

Ժամանակակից դպրոցում իրավական գիտելիքների ուսուցումն իրականացվում է «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում «Իրավունքի հիմունքներ» բաժնի ուսումնասիրման ընթացքում և հիմնվում է մի շարք սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ իրավական ուսուցման և դաստիարակության միասնությունը, գիտականությունը, մատչելիությունը, կյանքի հետ կապը, կապը սովորողների անձնական փորձի հետ, միջառարկայական կապերի ապահովումը:

Իրավական ուսուցման և դաստիարակության միասնության սկզբունքը հանդիսանում է դաստիարակող ուսուցման սկզբունք, որին համապատասխան՝ իրավական ուսուցումը կազմակերպվում է առավելապես հանուն դաստիարակության խնդիրների լուծման: Հանրահայտ է, որ հասարակական հարաբերությունների կարգավորման գործառույթների հետ մեկտեղ իրավունքը դաստիարակիչ դեր է խաղում, որը դրսևորվում է այն բանում, որ օրենքը, բացի պետական հարկադրանքից, հենվում է նաև համոզմունքի վրա: Իրավունքը կոչված է մարդկանց մեջ արթացնելու արդարության, ճշմարտության, մարդասիրության զգացումներ: Իրավունքն անբաժան է արդարությունից, որը, ըստ էության, նրա միջուկն է: Իրավունքի էությունը նրանում է, որ այն բոլորի և յուրաքանչյուրի շահերի, արդարացի փոխհարաբերությունների կայացման միջոց է: Իրավունքի և արդարության միասնությունն ամրագրվում է հռոմեական իրավունքի բանաձևերում. «Իրավունքը բարու և արդարության արվեստն է», «Իրավունքի պատվիրանները

հետևյալներն են՝ ազնիվ ապրել, ուրիշին չվիրավորել, յուրաքանչյուրին հատուցել հարկ եղածը»:

Գիտականության սկզբունքը նախատեսում է ուսումնական նյութի համապատասխանություն իրավաբանական գիտության նորագույն ձեռքբերումներին, գիտելիքների (իմացությունների) առաջնայնություն. ոչ թե գաղափարախոսությունն է որոշում գիտելիքների ընտրությունը, այլ գիտական իմացությունները թույլ են տալիս գաղափարախոսական հետևություններ կատարել: Այդ դիրքորոշման ընմբռնումը կարևոր է այն առումով, որ իրավունքն ունի քաղաքական բնույթ՝ իր էությամբ հանդես գալով որպես սոցիալական մեծ խմբերի կամքի և շահերի համաձայնեցման նորմատիվ ձև: Իրավունքը կարող է ծառայել որպես քաղաքականության արտահայտման և իրականացման ձև միայն այնքան ժամանակ, քանի դեռ ինքը՝ քաղաքականությունը, կառուցվում է իրավունքի և արդարության ելակետային սկզբնադրույթների վրա: Իրավաբանական գիտությունների ուսուցման գիտականության սկզբունքը պահանջում է սովորողների ծանոթացում ուսումնասիրվող իրավական հիմնախնդիրների տարբեր տեսանկյունների:

Մատչելիության սկզբունքը հեշտից դժվարին, հայտնիից անհայտին անցման մեջ է: Այսպիսով՝ նախատեսվում է, որ ուսուցումը գտնվում է մերձակա զարգացման գոտում:

Իրավունք դասավանդելիս ուսուցչի համար կարևոր է հենվել աշակերտների ունեցած կենսական փաստերի վրա. այդպիսով իրականացվում է կյանքի հետ կապի սկբունքը սովորողների

անձնական փորձի միջոցով, ինչը ենթադրում է սովորողների իրավական գիտելիքների ընդլայնում, խորացում, հարստացում և միաժամանակ զերծ է պահում աշակերտներին իրավական սխալ պատկերացումներից, կարծրատիպերից ու դրույթներից:

Իրավունքի դասավանդման առանձնահատկությունը նրանում է, որ իրավական տեղեկությունը բացատրելիս ուսուցիչն օգտվում է օրենքի կառույցներից ու բանաձևերից, որոնք բարդ են աշակերտի համար, քանի որ նրա մոտ վերացական մտածողությունը դեռ բավարար չափով զարգացած չէ: Այդուհանդերձ, անթույլատրելի է ճյուղային իրավունքի ուսուցումը փոխարինել ընդհանուր դատողություններով և իրավական դրույթների մոտավոր մեկնաբանություններով:

Իրավաբանական ցանկացած կառույց, ի տարբերություն ուսումնական այլ առարկաների իմաստաբանական ապարատի, ենթադրում է ձևակերպումների որոշակիություն և ճշգրտություն: Անթույլատրելի է նյութի ոչ արհեստավարժ հարմարեցումը, այնպիսի պարզեցումը, որը խեղաթյուրում է հասկացության, նորմի իմաստը:

Միջառարկայական կապերի ապահովման սկզբունքը ուսումնական գործընթացի բաղադրատարրերի մեջ է, որոնք առանձնացված են ըստ առարկաների յուրահատկությունների: Ուսումնական առարկաների հարմարեցումը, որպես կանոն, պայմանավորված է նրանց բովանդակությամբ: Միջառարկայական կապերի իրականացման գործընթացում ապահովվում է հետևողականությունը՝ սովորողների գիտական հայացքների,

աշխարհայացքի, զարգացման օրինաչափությունների ըմբռնման ձևավորման գործում (գծապատկեր 1):

Միջառարկայական կապերից զատ՝ ուսուցման մեթոդիկայում օգտագործվում են նաև ներառարկայական կապեր, որոնք ծառայում են իրավական գիտելիքների խորացմանը, դրանց ընդհանրացմանը, համակարգմանը, զարգացնում են առարկայի հանդեպ հետաքրքրություն, ակտիվացնում են ճանաչողական գործունեությունը և ձևավորում մտածողության ինքնուրույնություն:

Այս ամենից զատ՝ ներառարկայական կապերն ապահովում են հաջորդականությունն արժեքաբանական գիտելիքների զարգացման, գնահատման կարողությունների, սովորողների մտավոր ունակությունների միջև: Իրավական ուսուցման պրակտիկայում օգտագործվում են միջառարկայական և ներառարկայական կապերի տարաբնույթ հնարքներ և միջոցներ, օրինակ՝

- նոր նյութի բացատրում՝ հենվելով այլ առարկաներից ունեցած գիտելիքների վրա,
- ծանոթ նյութի հիշեցում ուսուցչի կողմից,
- սովորած նյութի հիշատակում զրույցի ընթացքում ուսուցչի տված հարցերի օգնությամբ,
- պարբերական կրկնության կազմակերպում մշակված խնդիրների հիման վրա ուղղված գիտելիքների, հմտությունների ու կարողությունների կիրառմանը, նախկինում յուրացված գիտելիքների արդիականացմանը:

Իրավունքի ուսուցիչը, իրականացնելով միջառարկայական կապեր, կարող է կիրառել ընդհանրացնող բնույթի խնդիրներ, օրինակ՝ ռեֆերատի հանձնարարում հետևյալ թեմաներից որևէ մեկով.

- Իրավունքի հարցերը Աստվածաշնչում:
- Իրավունքի և օրինականության հարցերը ժողովրդական բանահյուսությունում:
- Քիմիան քրեագիտության մեջ:



Գծապատկեր 1

- Կենսաբանությունը հետաքննությանը ծանոթանալու գործում:
- Ֆիզիկայի նվաճումների օգտագործումը հանցագործությունները բացահայտելիս:

Իրավական ուսուցման մեթոդները, որոնք պատասխանում են «ինչպե՞ս ուսումնասիրել իրավական գիտելիքները» հարցին, հնարքներ են, միջոցներ, մոտեցումներ, որոնք օգտագործվում են իրավական ուսուցման գործընթացում՝ իրավական կրթության նպատակներին հասնելու համար: Կան ուսուցման մեթոդների

տարբեր դասակարգումներ: Իրավական ուսուցման համար առավել հարմար է մեթոդների դասակարգումը՝ կախված սովորողների ճանաչողական գործունեության մակարդակից (տե՛ս աղյուսակ 1): Ուսուցման մեթոդի անվանումը վկայում է դրա համար յուրահատուկ յուրացման եղանակի և ուսումնական նյութի յուրացման կազմակերպման մասին:

Այսպես, օրինակ, բացատրական-պատկերավոր մեթոդը հաճախ օգտագործվում է գիտելիքների սկզբնական յուրացման կազմակերպման համար: Դա նոր և պատրաստի տեղեկատվության յուրացման եղանակն է: Այն բաղկացած է իրավաբանական նյութի բանավոր շարադրանքից, զննական պարագաների ցուցադրումից՝ դիագրամներ, ծաղրանկարներ և այլն: Տվյալ մեթոդի հնարների թվին են դասվում նկարագրությունը, այսինքն՝ արտաքին հատկանիշների բացահայտումը, բացատրությունը, պատմելը, ցուցադրությունը:

Պատմելը հետևողական շարադրանք է, որը կարող է ներկայացվել վերլուծական պատմությամբ (բացատրություն, ապացուցում) կամ պատմվածքով (պատկերավոր պատմություն, որ ունի սյուժե և ֆաբուլա):

Բացատրական-պատկերավոր մեթոդի հնարքները տարբեր են լինում, բայց բոլոր դեպքերում այս մեթոդի էությունը նույնն է. աշակերտը գիտակցաբար է ընկալում ուսուցչի կողմից ներկայացվող պատրաստի տեղեկատվությունը: Վերարտադրողական մեթոդն ապահովում է գործունեության եղանակների յուրացումը: Ուսուցիչը խնդիրները կազմում է այնպես, որ դրանք ուղղված լինեն գործողությունների վերարտադրմանը, օրինակ՝ խնդրում է

աշակերտին վերարտադրել բացատրությունը, շարադրել նորմատիվ իրավական ակտի մի դրվագի բովանդակությունը՝ այն կարդալուց հետո, պատասխանել հարցին, որը որոնում չի պահանջում: Այս բոլոր դեպքերում աշակերտը կրկնում է այն, ինչն իրեն հայտնի է:

Հետազոտական մեթոդի էությունը ստեղծագործական գործունեության կազմակերպված յուրացման, գիտելիքների ստեղծագործաբար կիրառման մեջ է:

Կարծիք կա, թե ստեղծագործության տարբերությունը գործունեության մյուս եղանակներից, որոնք դառնում են ունակություններ, նրանում է, որ վերջիններս, որոնց յուրացումը ձևավորում է ունակություններ և հմտություններ, կարելի է ցույց տալ կամ շարադրել տարր առ տարր, որից հետո մեկ այլ մարդ կարող է դրանք կրկնել: Ստեղծագործության գործունեության ընթացակարգերը ցույց տալ հնարավոր չէ: Դրանց յուրացումը հատուկ եղանակներ է պահանջում: Հետազոտական մեթոդը ձևավորում է հենց ստեղծագործության գործունեության հմտություններ, ունակություններ, ընթացակարգեր, որոնց օրինակներ կարող են ծառայել այնպիսի միջոցները, ինչպիսիք են ավելի վաղ ձեռք բերված գիտելիքների և ունակությունների ինքնուրույն փոխանցումը նոր իրավիճակի մեջ, հիմնախնդրի լուծման համար այլընտրանք տեսնելը և այլն:

Այդ մեթոդը կիրառող ուսուցիչը կառուցում կամ ընտրում է ըստ դասի թեմայի հիմնախնդիրները, որոնք ներկայացնում է աշակերտին:

Ուսուցման մեթոդների դասակարգումը՝ կախված սովորողների ճանաչողական գործունեության մակարդակից որոշակի համակարգում:

Աղյուսակ 1

Մ.Ն.Սկատկինի առաջարկը		Ի. Յա. Լերների առաջարկը
Տեղեկատվական (ինֆորմացիոն) - (ընդունիչ) ռեցեպտիվ, վերարտադրողական	Պատրաստի գիտելիքների շարադրանք	Բացատրական պատկերավոր, վերարտադրողական
Հիմնախնդրային շարադրանք, որոնողական (էվրիստիկ), հետազոտական	Արդյունավետ մեթոդներ՝ նախատեսված ինքնուրույն որոնողական գործունեության համար	Հիմնախնդրային շարադրանք, մասնակի որոնողական (էվրիստիկ), հետազոտական

Աշակերտն այդ խնդիրները լուծում է ինքնուրույն: Օրինակ՝ աշակերտը պետք է որոշի՝ կարելի՞ է արդյոք փաստաբանին մեղադրանք ներկայացնել «տեղեկություն չհայտնելու» համար, կարո՞ղ է արդյոք փաստաբանը վկա լինել դատարանում, ո՞վ կարող է և ո՞վ է պարտավոր պահպանել անձնական գաղտնիքը և այլն: Այդ հարցերին պատասխանելու համար աշակերտը պետք է միտք արտահայտի և այն ճշտի օրենքի համապատասխան հոդվածի հատվածներով:

Ուսուցման հետազոտական մեթոդը պայմաններ է ստեղծում այն բանի համար, որ սովորողն իր համար մատչելի մակարդակով կարողանա ձեռք բերել գիտական ճանաչողության հմտություններ: Հիմնախնդրային առաջադրանքները կարող են կառուցվել նաև զննական հիմքի վրա:

Էվրիստիկ (մասնակի-որոնողական) մեթոդի էությունը նրանում է, որ ուսուցիչը, ներկայացնելով հիմնախնդիրը, որ դժվար է ինքնուրույն լուծել, այն բաժանում է ենթախնդիրների, իսկ ապա փոխկապակցված հարցերի խմբի միջոցով աշակերտին հանգեցնում լուծման: Ուսուցման այդպիսի մեթոդի դեպքում աշակերտն ինքնուրույն է միայն ուսումնական հետազոտության առանձին փուլերում:

Հետազոտական և էվրիստիկ մեթոդները հիմնախնդրային շարադրանքի մեթոդի հետ մեկտեղ, երբ ուսուցիչը ներկայացնում է խնդիրը և դատողությունների շղթայի միջոցով բացահայտում նրա լուծումը՝ ցույց տալով միաժամանակ ճանաչողական գործընթացի հակասականությունն ու բարդությունը, հիմնախնդրային ուսուցման հիմքն են կազմում: Ուսուցիչը, օգտագործելով հիմնախնդրային շարադրման մեթոդը, ժամանակ առ ժամանակ ընդհատում է իր ասելիքը և աշակերտներին առաջարկում է ենթադրություն անել, ձևակերպել հարց, որը տեղին կլիներ տվյալ պահին: Այդպիսով՝ պայմաններ են ստեղծվում այն բանի համար, որ աշակերտները հետևեն մտքի ուղղությանը, մասնակցեն նրա դատողություններին:

Մեթոդները բաղկացած են ուսուցման հնարներից: Դիդակտիկ մեթոդների բնույթն ուսուցչին հնարավորություն է տալիս իմաստավորել կոնկրետ հնարը կամ դրանց համակցումը ամբողջական մեթոդիկայում:

Մեթոդական հնարը կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված գործողություններ են: Օրինակ՝ տեսական նյութի բանավոր շարադրանքի հնարքների թվին են դասում բացատրությունը, դատողությունը, բնութագրումը, պատումը, նկարագրությունը:

Բացատրությունը մանրամասն բացահայտում է իրավաբանական հասկացությունների, երևույթների, իրադարձությունների էությունը: Դատողությունը բացատրության տարբերակ է: Սովորաբար այս հնարը սկսվում է հարցի ձևակերպումով, որի պատասխանը տրվում է փաստերի և կարծիքների համադրման ճանապարհով:

Որոշ դեպքերում ուսուցիչը դիմում է կոնսպեկտային, իսկ որոշ դեպքերում էլ՝ սյուժետային պատումին: Կոնսպեկտային պատումը ոչ գլխավոր բովանդակության հիմնական դրույթների կարճ թվարկումն է: Սյուժետային պատումի օգնությամբ ուսուցիչը հուզականորեն շարադրում է սյուժետային գծով իրավաբանական փաստերի բովանդակությունը: Որպեսզի տա իրավական երևույթների, փաստերի, նորմատիվ-իրավական ակտերի գնահատականը, ուսուցիչը դիմում է բնութագրման հնարքին: Համեմատական բնութագրումը թույլ է տալիս առանձնացնել էական, համադրվող հատկանիշները, գտնել ընդհանուրը, առանձնահատուկը, եզակին: Համեմատության արդյունք կծառայի եզրահանգումը: Օգտվելով նկարագրությունից, հատկապես վերլուծական՝ ուսուցիչը տալիս է էական, բայց, հիմնականում, արտաքին հատկանիշները, գծերը և մանրամասները:

Ճանաչողական գործունեության կազմակերպման հնարների թվին կարելի է դասել աշխատանքի տարաբնույթ հնարներն ուսումնական տեքստի հետ՝ տեքստի պլանի և անոտացիայի համադրումը, գրախոսությունը, ուսումնասիրված թեմայի բառարանի, տեքստի սխեմային մոդելի համադրումը:

Հատկապես առանձնացնում են ուսումնական ունակությունների ձևավորման հնարները: Տարբերակում են տեղեկատվական, կազմակերպչական, մտավոր ունակություններ:

Ի. Յա. Լերներն առաջարկում է հետևյալ առաջադրանքները, որոնք թույլ են տալիս յուրացնել ճիշտ մտածողության նորմերը՝

1. ամբողջությամբ վերարտադրել ընկալած բանավոր կամ գրավոր տեքստը
2. շարադրել այն հակիրճ
3. վերնագրել տեքստը կամ նրա մասերը
4. ձևակերպել սահմանումը ըստ նկարագրության
5. առանձնացնել երևույթի առանձին հատկանիշները՝ ըստ նկարագրության

Աղյուսակ 2

N	Հատուկ ունակություններ, որոնք անհրաժեշտ է զարգացնել	Հնարավոր մեթոդական հնարներ
1	2	3
	Սովորեցնել կարդալ իրավաբանական գրականություն, վերլուծել այն, կողմնորոշվել իրավաբանական հիմնական աղբյուրներում	Դասերի ժամանակ անհրաժեշտ է ցուցադրել վարքականոնները և նորմատիվ-իրավական ակտերը, իրավունքի աղբյուր ները, բացատրել, թե ինչպես կարելի է դրանցում գտնել անհրաժեշտ տեղեկությունը: Իրավաբանական խնդիրները լուծելու համապատասխան աշխատանքի ժամանակ թույլ տալ սովորողներին օգտվել ու տեղեկատու գրականությ ունից:

		Խթանել իրավաբանական գրականության ընթերցումը	Իրավունքի կաբինետում (դպրոցի գրադարանում) կազմա կերպել բարոյա-իրավական գրականության թեմատիկ ցուցա հանդեսներ՝ ըստ իրավագիտա կան դասընթացի ծրագրի, կազմա - կերպել գրադանավարի ելույթ՝ նոր ստացված իրավա բանական գրականության հետ կապված: Հանձնարարել յուրաքան չյուր սովորողի՝ կազմել անոտացիա՝ կարդացած իրավաբա նական գրքերից որևէ մեկի վերաբերյալ :
		Սովորեցնել բնորոշելու, թե արդյո՞ք տվյալ իրավիճա կը իրավաբանական իրավիճակ է, կյանքի իրավիճակներում տեսնել իրավաբանական հիմնախնդիրներ	Առաջադրանք տալ գրախոսական գրելու «իրավական» ներ կայացման, ֆիլմի, գրքի վերաբերյալ, կարդալ թերթի հոդված, վերլուծել այն և գնահատական տալ այնտեղ նկարագրված իրադարձություններին՝ օրենսդրության դիրքերից: Դասերի ժամանակ կանոնավոր կերպով օգտագործել այլընտրանքային վարժություններ, որոնք պարունակում են այս հարցը. «Երկու իրավիճակից ո՞րն է իրավաբանական, ո՞րը՝ բարոյական»:
		Սովորեցնել կողմնորոշվել հայաստանյան իրավունքի ճյուղերում	Կարելի է սովորողներին առաջարկել՝ լուծելու «իրավական» խաչբառ, գրելու «իրավական» թելադրություն, բնորոշելու իրավունքի ճյուղը՝ դրա համար հատուկ պատրաստված պլակատով, տեսասյուժեով, ձևավորումով,պատասխանելու, թե իրավունքի ո՛ր ճյուղի նորմերով են կանոնավորվում գրքում նկարագրված իրադարձությունները :
		Մշակել իրավաբանական գրականությանը և իրավաբանական աղբյուրներին դիմելու սովորույթ	Խնդիրները լուծելիս մշտապես օգտագործել հետևյալ առաջադրանքը. «Բացատրեք, թե օրենքի ո ՛ր հոդվածների (ենթաօրենսդրական ո՛ր ակտի) հիման վրա եք ընդունել այդ որոշումը»:

	Ձևավորել ունակություն՝ ինքնուրույն կողմնորոշվելու օրենսդրության մեջ և կիրառելու իրավունքի նորմերի իմացությունն առանձին կենսական իրավիճակներում, որոնք ունեն իրավաբանական իմաստ	Սովորել հանդես գալ իրավաբանական թեմաներով զեկույց ներով ու հաղորդումներով՝ նորմատիվ -իրավական ակտերի և այլ աղբյուրների հիման վրա: Պարբերաբար անցկացնել գործնական պարապմունքեր՝ ուսումնական իրավաբանական խնդիրները լուծելու ուղղությամբ:

6. Վերարտադրել միանման օբյեկտների համեմատությունը
7. Ընդհանրացնել երևույթների հատկանիշներն ու առանձնահատկությունները
8. Մասնատել օբյեկտը ըստ նրա տարրերի՝ նկարագրության հիման վրա
9. Վերարտադրել միատիպ կամ տարատիպ երևույթների համակարգումը
10. Վերարտադրել ընդհանուրի բացահայտումը կոնկրետ երևույթների հիման վրա, կոնկրետացնել ընդհանուրը
11. Համակարգել ուսուցչի կողմից բերված կամ տեքստի ապացույցները :

2.2 Իրավական դաստիարակության համակարգը

Իրավական դաստիարակության համակարգը ներառում է իրավական մշակույթը, իրավագիտակցությունը, իրավական մտածողության

զարգացումը և իրավական գիտելիքները: Դպրոցականների իրավական դաստիարակության մանկավարժական պայմանները պետք է խարխսված լինեն վերոհիշյալ հասկացությունների բովանդակության վրա: Այս նպատակի իրականացման համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի օգոստոսիսի 31-ի N40 արձանագրային որոշմամբ սահմանվել է՝

1. իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգը:

Իրավական կրթության և իրավական դաստիարակության գործող համակարգի կիրառության փորձը վկայում է, որ այն օբյեկտիվորեն ի վիճակի չէ բավարար չափով արտահայտել մեր երկրի իրավական համակարգում տեղի ունեցող զարգացումները: Անկախության տարիներից ի վեր այդ համակարգում, իհարկե, տեղի են ունեցել առանձին փոփոխություններ, սակայն դրանք, իրավիճակային լինելով հանդերձ, հանգեցրել են նաև բացասական հետևանքների: Օրինակ՝ բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի պայմաններում մինչ օրս հստակ տարանջատված չեն բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերը: Այս միտքը կարելի է պնդել նաև հանրակրթության համակարգի՝ հիմնական և ավագ դպրոցների հետ կապված: Սրա հետևանքով երկու ծրագրերի միջև առկա են դրանց արդյունավետությունը նվազեցնող անհիմն կրկնություններ: Արդյունավետ լուծում չի ստացել տեսության և պրակտիկայի միջև կապի ապահովումը: Այս ամենը նույնիսկ առանձին դեպքերում առաջացնում է իրավական ժխտողականության դրսևորումներ:Առկա

խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ են համակարգային այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են այդ խնդիրներին տալ հիմնարար լուծում: Պետք է արձանագրել, որ անհրաժեշտ է մեր երկրում ապահովել իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի առկայությունը, բարձրացնել իրավական կրթության որակը և իրավական կրթությանը ներկայացվող պահանջները:

Իրավական կրթությունը պետք է իրականացվի կրթության ոլորտի շահառուների լայն ներգրավմամբ և աջակցությամբ, այդ թվում՝ պետական մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, իրավաբանների մասնագիտական միավորումների, ուսանողների, ինչպես նաև կրթության ոլորտում ծրագրեր ֆինանսավորող պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

Պետք է նպատակն դրվի ստեղծել անհրաժեշտ հիմքեր իրավական դաստիարակության և իրավական վարքագծային մշակույթի արմատավորման հանրային համակարգի ձևավորման, իրավական կրթության զարգացման միջոցառումների մշակման և իրականացման համար: Ըստ այդմ իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցման միջոցառումները պետք է ընթանան հետևյալ մակարդակներում.

1) նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական

հաստատություններում իրավունքի ուսուցման և հասարակության իրավական համաուսուցման համակարգի կատարելագործում,

2) միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի ձևավորում և զարգացում,

3) բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի վերափոխում,

4) ՁԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման և դաստիարակության կայուն համակարգի ստեղծում: Նախադպրոցական և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պետության քաղաքականության կարևորագույն խնդիրներից է բարձր իրավագիտակցությամբ օժտված քաղաքացիների դաստիարակության ապահովումը: Այս առումով, թե՛ նախադպրոցական, թե՛ հանրակրթական ծրագրերն ունեն վերանայման և իրավական կրթությանը նվիրված դասընթացների ընդլայնման կարիք: Հաջողված բարեփոխումներ իրականացնելու նպատակով, մասնավորապես, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության համակարգում ներդնել իրավական կրթության ու դաստիարակության նոր սկզբունքներ:

ՀՀ կառավարության համապատասխան ռազմավարական ծրագրերում երեխայի ֆիզիկական, հոգեկան, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծումից բացի անհրաժեշտ է

նախադպրոցական կրթության հիմնական խնդիր ճանաչել նաև երեխայի իրավական դաստիարակությունը: Դրանից ելնելով՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և ծրագիրը մշակելիս պետք է հաշվի առնել նաև նախադպրոցական կրթության առաջարկվող նոր խնդիր-նպատակը՝ իրավական դաստիարակության ապահովումը: Հաջորդ քայլը նախադպրոցական կրթության համար ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի ծրագրային փաթեթի մշակումն ու կիրառումն է:

Չափորոշիչների, ծրագրերի վերանայված համալիրը և դրանց կիրառությունը կարևոր նշանակություն կունենան երեխայի վաղ մանկության շրջանում օրենքի և, ընդհանրապես, օրինականության նկատմամբ հարգանքի ձևավորման համար: Կարևոր է հանրակրթական տարրական, միջին և ավագ մակարդակների կրթական ծրագրերում կատարելագործել իրավական համաուսուցման և դաստիարակության համակարգի կատարելագործումը:

Ներկայում հանրակրթության երեք մակարդակների՝ տարրական, հիմնական և միջնակարգ կրթական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական գործունեությունը կարգավորում է ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի թիվ 439-Ն որոշմամբ հաստատված՝ Հանրակրթական պետական չափորոշիչով: Կառավարության այդ որոշմամբ հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական երեք ծրագրերի աստիճանների՝ հետևյալ ուսումնական բնագավառներով՝

1)Հայոց լեզու և գրականություն,

2) Հայրենագիտություն,

3)Օտար լեզուներ,

4) ԲՏՃՄ,

5) Արվեստ և արհեստ,

6) Հասարակություն, հասարակական գիտություններ,

7) Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Այս բնագավառներին համապատասխան ձևավորվում է հանրակրթական ծրագրերի առարկայացանկը, ամեն մի մակարդակում կրթության նպատակները, ծրագրի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները:

Իրավական կրթությունը և դաստիարակությունը պետք է դառնան ուսումնական առանձին բնագավառ և դրանից բխող անհրաժեշտ փոփոխություններ կատարվեն հանրակրթության պետական չափորոշիչում:

Նման հայեցակարգային-ծրագրային փոփոխությունը՝

1) կբարձրացնի սովորողների իրավական գիտակցության աստիճանը և կձևավորի իրավական մշակույթ հանրակրթության բոլոր

մակարդակներում՝ տարրական (1-4 դասարաններ), միջին (5-9 դասարաններ), ավագ (10-12 դասարաններ).

2) նախադրյալներ կստեղծի կրթական հաջորդ աստիճանում իրավաբանական կրթության համար պահանջվող կրթամակարդակի ապահովման համար:Անհրաժեշտ է իրավական համաուսուցման համակարգը պարտադիր դարձնել միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով:

Եզրակացություն

Իրավական կրթությունը և դաստիարակությունը հանդիսանում են իրավագիտակից և տարբեր տեսակի մարտահրավերների պատրաստ քաղաքացի կերտելու կարևորագույն պայմաններից մեկը: Սրանով էր

պայմանավորված նաև թեմայի ընտրությունը և դրա մանրամասների մեջ խորամուխ լինելու նախաձեռնությունը:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկան բազմաթիվ իրողություններ,որոնց ճիշտ համակարգման և հետևողականության արդյունքում կարող են նպաստել առկա տարբեր խնդիրների լուծմանը՝ մոտակա և հեռակա տեսլականում:

Այսպիսով եթե ամփոփելու լինենք թեմայի ուսումնասիրության ընթացքում պարզ դարձած որոշակի հիմնախնդիրների պարզաբանումը կարող ենք հարցադրել և եզրակացնել՝

- ինչ՞ է իրականում կատարվում այս պահին,
- որո՞նք են այսօրվա մարտահրավերներն ու այլընտրանքները,
- ինչի՞ն է պետք ուշադրություն դարձնենք
- ինչպե՞ս են իրավական կրթությունը և դաստիարակությունը փոխում մարդու պատկերացումները և վարքագիծը
- ինչպե՞ս ենք պատրաստվում դիմակայել կեղծ լուրերի համաճարակին՝ համապատասխան իրավական կրթություն ունենալու պայմաններում
- ի՞նչ պետք է սովորեցնենք այսօրվա աշակերտին՝ վաղվա արժանապատիվ,հայրենատեր և իրավագիտակից քաղաքացի լինելու համար:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1.Провалинский Д.И., Мотивация как элемент механизма реализации правовых стимулов. Теория и практика общественного развития, 2014, N 17, էջ 116:

2.Мещерякова А.В., Мещерякова С.Н., О формировании пускового механизма правового поведения личности. Философия права, 2015, N 1 (68), էջ 84:

3.Зарубаева Е. Ю., Мотивация и установка как психолого-правовые факторы правомерного поведения личности. Сибирский юридический вестник,
2004, N 4, էջ 23:

4.Максимов Г.Б., Особенности обыденной правовой оценки (вопросы теории государства и права). Бизнес в законе, 2013, N 1, էջ 32:

5.https://en.wikipedia.org/wiki/Nudge_(book)

6. Pelle Guldborg Hansen, "The Definition of Nudge and Libertarian Paternalism: Does the Hand Fit the Glove", European Journal of Risk Regulation, 2016, N 1, էջ 20

7.Բրուտյան Վ. Ա., Իրավաբանական կրթության որակի բարձրացման ժամանակակից խնդիրները: ԵՊՀ, «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 366-376:

8.Брутян В. А., Правовое воспитание как одной из средств преодоления правового нигилизма (на примере Армянской Республики). "Право и образование" // Научный журнал. М., ГУП МО "Коломенская типография", "2014, N1, с. 55-64.

9.(http://www.lexxion.de/pdf/ejrr/Pelle_2016_01.pdf):